ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2023 թվականի N 1931 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 568-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) N 1 հավելվածի 3-րդ կետում «Անպտղության բուժման և հաղթահարման նպատակով պետության» բառերը փոխարինել «Պետության» բառով.

2) N 1 հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) 28-42 (ներառյալ) տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անզավակ կանայք՝ սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված ծավալներով.».

3) N 1 հավելվածի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«22. Անպտղության պատճառագիտության հետազոտման ու բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացին (այսուհետ՝ դիմումատուն) ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ սույն հավելվածի N 1 ձևին համապատասխան, իսկ սույն հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 5 ձևին.

2) դիմումատուի անձնագիր, նույնականացման քարտ.

3) սույն հավելվածի 10-րդ և 11.1-ին կետերով նախատեսված պահանջներին համապատասխան՝ դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր, իսկ 10-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված բնակավայրերի բնակիչ հանդիսացող շահառու ամուսիններից մեկը՝ նաև տեղեկանք բնակության վայրից՝ մշտապես բնակվելու և տեղեկանք ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից՝ մշտական բնակության վայրում առնվազն մեկ տարի հաշվառված լինելու վերաբերյալ, ընդ որում՝ շահառու ամուսիններից մեկի հաշվառման և մշտական բնակության վայրերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի N 713 որոշման N 1 հավելվածով սահմանված ցանկին.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթուղթը (ներկայացվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու դեպքում).

5) էպիկրիզ (բժշկական փաստաթղթեր) նախկինում կիրառված հետազոտման մեթոդների ու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին՝ տրված պացիենտի բուժօգնությունն իրականացրած բժշկական հաստատության կամ տարածքային սպասարկման կանանց կոնսուլտացիայի կողմից (եթե կինը մինչև դիմելը հետազոտվել և (կամ) անպտղության կապակցությամբ ստացել է բժշկական օգնություն): Առաջնակի հետազոտվող անպտուղ զույգերի և

սույն հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում բժշկական փաստաթղթեր չեն ներկայացվում:».

4) N 1 հավելվածի 26-րդ կետը «համապատասխան» բառից հետո լրացնել «, իսկ սույն հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 6 ձևին» բառերով.

5) N 1 հավելվածի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«27. Սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ուղեգիրը՝ սույն հավելվածի N 3 ձևին համապատասխան, իսկ սույն հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 7 ձևին, տրամադրում է բուժհաստատության հանձնաժողովը՝ կցելով քաղվածք հանձնաժողովի եզրակացությունից՝ հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:».

6) N 1 հավելվածի 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31. Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ստացված արդյունքների մասին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություն՝ սույն հավելվածի N 4 ձևին համապատասխան:».

7) N 1 հավելվածի N 4 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

8) N 1 հավելվածը լրացնել նոր՝ NN 5, 6 և 7 ձևերով՝ համաձայն N 2 հավելվածի.

9) N 2 հավելվածի ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.11.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ